

**«Արմենիան Զափըր Փրոգրամ»
փակ բաժնետիրական ընկերություն**

**Ֆինանսական հաշվետվություններ
2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Բովանդակություն

Տնօրենների խորհրդի կազմը	2
Անկախ աուդիտորի հաշվետվություն	3
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Հաշվապահական հաշվեկշիռ	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8-25

Ծանուցում

Կից հայերենով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները եւ անկախ աուդիտորի հաշվետվությունը թարգմանվել են հայ ընթերցողի համար, սակայն վերջիններիս բնօրինակը անգլերեն տարբերակն է: Հայերեն եւ անգլերեն տարբերակները մեկնաբանելիս առաջացած տարբերությունների դեպքում առաջնային է անգլերեն տարբերակը:

**«Արմենիան Զափոյր Փրոգրամ»
փակ բաժնետիրական ընկերություն**

Հայաստանի Հանրապետություն

Երեւան 375010

Խանջյան փող. 19

Տնօրենների խորհրդի կազմը

Վալերի Մեջլումյան	Նախագահ
Գագիկ Արզումանյան	Տնօրեն
Նիկոլայ Ֆեոֆանով	Տնօրենի առաջին տեղակալ, Արտադրական վարչության պետ



«Բեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ

Հանրապետության 8
Եր-ան, 375010,
Հայաստանի Հանրապետություն

Հեռ/ֆաքս +374(1) 566 762
Էլ-փոստ: general@kpmg.co.am


Անկախ աուդիտորի հաշվետվություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիան Զափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2003թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: 4-ից 25-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Ընկերության 2002թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ եւ այդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, նախքան սույն ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 27-ում քննարկված վերաներկայացումների, իրականացրել է մեկ այլ աուդիտորական ընկերություն, որի 2003թ. մայիսի 7-ով թվագրված աուդիտորական հաշվետվությունն արտահայտում է դրական եզրակացություն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության եւ բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ ընտրանքային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2003թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքները, սեփական կապիտալում փոփոխություններն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:


Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
Լիցենզավորված աուդիտորներ
Երևան
30 հունիսի 2004թ.




KPMG Armenia JSC, a company registered under the Law of the Republic of Armenia, is a member of KPMG International, a Swiss cooperative.

	Ծխթգ.	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ Վերաներկայացված
Հասույթ	4	7,620,896	6,039,518
Ինքնարժեք		(6,327,498)	(5,103,830)
Համախառն շահույթ		1,293,398	935,688
Այլ գործառնական եկամուտ	5	645,062	584,721
Բաշխման ծախսեր	6	(357,780)	(313,904)
Վարչական ծախսեր	7	(732,873)	(772,741)
Այլ գործառնական ծախսեր	8	(87,424)	(464,213)
Պահուստ առելուտային եւ այլ դեբիտորական պարտքերի գծով		(222,024)	-
Շահույթ/(վնաս) գործառնություններից		538,359	(30,449)
Չուտ ֆինանսական ծախսեր	9	(181,291)	(244,195)
Շահույթ/(վնաս) մինչեւ հարկումը		357,068	(274,644)
Շահութահարկի գծով ծախս	10	(52,072)	(49,152)
Տարվա զուտ շահույթ/(վնաս)		304,996	(323,796)

4-ից 25-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրենների խորհրդի անդամների կողմից 2004թ. հունիսի 30-ին եւ վերջիններիս անու-
 նից ստորագրվել՝


 Գ. Խաչատրյան
 Տնօրեն




 Տ. Խաչատրյան
 Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 8-ից 25-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ Վերաներկայացված
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	4,585,889	4,684,382
Ոչ նյութական ակտիվներ	12	3,358	-
Հետաձգված հանքաարդյունահանման ծախսումներ	13	320,693	277,954
Հետաձգված ծախսեր		-	40,751
Երկարաժամկետ ներդրումներ	14	25,634	51,647
		4,935,574	5,054,734
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	1,516,947	652,511
Առևտրային և այլ դեբիտորական պարտ- քեր	16	1,777,378	580,423
Տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր	17	23,000	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	81,032	6,757
		3,398,357	1,239,691
Ընդամենը ակտիվներ		8,333,931	6,294,425
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	19	3,069,716	2,960,651
Վերազնահատման պահուստ		2,763,244	2,822,716
Կուտակված վնաս		(1,762,201)	(2,126,669)
		4,070,759	3,656,698
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություն	10	550,543	544,422
		550,543	544,422
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փախառություններ	20	1,424,140	609,486
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	2,288,489	1,483,819
		3,712,629	2,093,305
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		8,333,931	6,294,425

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է ընթերցվի 8-ից 25-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Արմենիան Զափոք Փրոգրամ» ՓԲԸ
 Ֆինանսական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
		Վերաներկայացված
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Տարվա զուտ շահույթ/(վնաս) մինչև հարկումը	357,068	(274,644)
Ճշգրտում հետեւյալ հոդվածների գծով՝		
Հիմնական միջոցների մաշվածություն	138,990	133,045
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	2,923	29,023
Հանքարդյունաբերական ծախսերի ամորտիզացիա	33,634	71,471
Վնաս/(շահույթ) հիմնական միջոցների օտարումից	10,372	(35)
Շահույթ ներդրումների օտարումից	(6,167)	-
Պահուստ առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքերի գծով	222,024	1,630
Տոկոսային ծախսեր	237,359	147,196
Գործառնական շահույթ նախքան փոփոխությունները շրջանառու կապիտալում	996,203	107,686
Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքերի եւ այլ ակտիվների աճ	(1,482,090)	328,966
Պաշարների աճ	(864,436)	(150,722)
Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքերի աճ	863,939	3,903
Դրամական միջոցների հոսքեր գործառնականության	(486,384)	289,833
Վճարված տոկոսներ	(240,234)	(538,390)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	(726,618)	(248,557)
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական միջոցների ձեռք բերում	(69,316)	(810,969)
Ներդրումներ հանքարդյունաբերական գույքում	(76,373)	(149,240)
Ոչ նյութական ակտիվների ձեռք բերում	(6,281)	(62,925)
Հոսքեր/(ձեռք բերում) երկարաժամկետ ներդրումների օտարումից	32,180	(52,697)
Հոսքեր հիմնական միջոցների վաճառքից	15,023	35
Տրամադրված վարկեր	(23,000)	-
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	(127,767)	(1,075,796)
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հոսքեր երկարաժամկետ փոխառությունների գծով	-	6,649,014
Հոսքեր բաժնետոմսերի թողարկումից	109,065	1,454,472
Հոսքեր կարճաժամկետ փոխառություններից/(կարճաժամկետ փոխառությունների մարում)	819,595	(6,532,566)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից	928,660	1,570,920
Դրամական միջոցների եւ դրանց համարժեքների զուտ աճ տարվա ընթացքում	74,275	246,567
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	6,757	(239,810)
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթագրություն 18)	81,032	6,757

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 8-ից 25-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Արմենիան Զափոքր Փրոգրամ» ՓԲԸ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Բաժնետիրական կապիտալ հազ. դրամ	Վերագնահատման պահուստ հազ. դրամ	Կուտակված վնասներ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2002թ. Ըստ նախորդ ժամանակա- շրջանների ֆինանսական հաշվետվությունների Նախորդ ժամանակաշրջա- նի ճշգրտում (ծնթգ. 27)	1,506,179	3,230,881	(1,921,366)	2,815,694
	-	(265,650)	(34,488)	(300,138)
Վերաներկայացված մնա- ցորդն առ 1 հունվարի 2002թ.	1,506,179	2,965,231	(1,955,854)	2,515,556
Տարվա զուտ վնաս	-	-	(323,796)	(323,796)
Վերագնահատման պա- հուստ	-	(142,515)	152,981	10,466
Բաժնետոմսերի թողարկում	1,454,472	-	-	1,454,472
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2002թ.	2,960,651	2,822,716	(2,126,669)	3,656,698
Մնացորդն առ 31 դեկտեմ- բերի 2003թ. Ըստ նախորդ ժամանակա- շրջանների ֆինանսական հաշվետվությունների Նախորդ ժամանակաշրջա- նի ճշգրտում (ծնթգ. 27)	2,960,651	2,822,716	(2,031,980)	3,751,387
	-	-	(94,689)	(94,689)
Վերաներկայացված մնա- ցորդն առ 1 հունվարի 2003թ.	2,960,651	2,822,716	(2,126,669)	3,656,698
Տարվա զուտ շահույթ	-	-	304,996	304,996
Բաժնետոմսերի թողարկում	109,065	-	-	109,065
Հիմնական միջոցների վե- րագնահատման պահուստի իրացում	-	(59,472)	59,472	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2003թ.	3,069,716	2,763,244	(1,762,201)	4,070,759

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ըն-
թերցվի 8-ից 25-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղ-
կացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1. Նախապատմություն

ա) Կազմակերպությունը եւ հիմնական գործունեությունը

«Արմենիան Բափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադրվել է 1997թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հայտարարված կապիտալը կազմում է 40 միլիոն դրամ: 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն էին՝

- ՎԱԼԵԶՍ Ֆ.Մ. Իսթբլիշմենթ - 80.7%
- Վալերի Մեջլումյան - 19.3%

Ընկերության հիմնական գործունեությունը սեւ պղնձի արտադրությունն ու իրացումն է: Ի լրումն, Ընկերությունը ներագրավված է հանքերի շահագործման եւ Հայաստանում հանքարդյունաբերական գործունեության զարգացման գործում:

բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական եւ տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել եւ կշարունակեն իրենց ազդեցությունն այս միջավայրում գործող ձեռնարկությունների վրա: Հետեւաբար, Հայաստանում ծավալած գործունեությունը կապված է զգալի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ներկայացված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության ֆինանսական վիճակի եւ գործառնությունների վրա տնտեսական իրավիճակի հնարավոր ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմքը

ա) Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի («ՀՀՄՍԽ») կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների եւ ՀՀՄՍԽ-ի Հաշվետվությունների մեկնաբանման միջազգային հանձնաժողովի կողմից հրապարակված մեկնաբանությունների համաձայն:

բ) Պատրաստման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով կամ ինքնարժեքով (ծանոթագրություն 3 բ):

գ) Չափման եւ ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Սույն ֆինանսական հաշվետվությունների չափման եւ ներկայացման արժույթը հանդիսանում է դրամը: Որպես Ընկերության չափման արժույթ ղեկավարությունը սահմանել է դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների եւ հանգամանքների տնտեսական էությունը: ՀՀ տարածքից դուրս դրամը փոխարկելի արժույթ չէ:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

դ) Անընդհատություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, որը ենթադրում է ակտիվների իրացում եւ պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում: Ընկերության ակտիվների փոխհատուցվելիության, ինչպես նաեւ Ընկերության ապագա գործունեության վրա կարող են էական ազդեցություն ունենալ ներկա եւ ապագա տնտեսական միջավայրերը (ծանոթագրություն 1 (բ)): Ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում որեւէ ճշգրտում՝ կապված գործունեությունն անընդհատության սկզբունքով շարունակելու Ընկերության անկարողության հետ:

ե) Չնահատումներ

Սույն ֆինանսական հաշվետվությունները ՖՅՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար, Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների եւ պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաեւ պայմանական պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ եւ ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառվել է ստորեւ ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման այս քաղաքականությունը կիրառվել է հետեւողականորեն:

ա) Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա համար սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները փոխարկվում են դրամի այդ ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքներով: Փոխարկման հետեւանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվներն ու պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական կամ վերագնահատված արժեքով, փոխարկվում են ՀՀ դրամի՝ գործարքի կամ վերագնահատման օրվա դրությամբ սահմանված արտարժույթի փոխարժեքով:

բ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են վերագնահատված արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Սեփական ուժերով կառուցված ակտիվի սկզբնական արժեքը ներառում է նյութերի ձեռք բերման արժեքը, աշխատուժի ծախսումները եւ արտադրական վերադիր ծախսերի համապատասխան մասը: Դեկավարությունը կանոնավոր կերպով իրականացնում է հիմնական միջոցների արժեքների գնահատում:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող հիմնական բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման կամ նորացման ծախսերը, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ներառյալ հիմնական ստուգումները եւ վերանորոգման ծախսումները, կապիտալացվում են: Այլ

հետագա ծախսերը կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են հիմնական միջոցների միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ կատարվելուց հետո:

(iii) Վերագնահատում

Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետեւանքով աճում է, աճն անմիջականորեն վերագրվում է սեփական կապիտալին: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետեւանքով նվազում է, նվազումն անմիջականորեն վերագրվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, այն ճանաչվում է սեփական կապիտալում:

(iv) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջինիս կառուցումն ավարտելու եւ շահագործման հանձնելու պահից:

- Ծենքեր 50 տարի
- Վարձակալված միջոցների բարելավում 20 տարի
- Հիմնական միջոցներ 10 տարի
- Փոխադրամիջոցներ 10 տարի
- Տնտեսական միջոցներ 2-10 տարի

(v) Անավարտ շինարարություն

Անավարտ շինարարությունն իրենից ներկայացնում է կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ եւ ներկայացվում է ինքնարժեքով: Ինքնարժեքը ներառում է նյութերի ձեռք բերման արժեքը, աշխատուժի ծախսումները եւ այլ ուղղակի ծախսերը: Անավարտ շինարարության գծով մաշվածության հաշվարկն սկսվում է համապատասխան ակտիվների կառուցումն ավարտելու եւ շահագործման հանձնելու պահից:

գ) Ոչ նյութական ակտիվներ

(i) Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան եւ արժեզրկումից կորուստները:

(ii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկը սկսվում է ակտիվը շահագործման հանձնելու պահից:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության սահմանված ժամկետներն են՝

- Հաշվապահական ծրագիր 2 տարի
- Այլ ոչ նյութական ակտիվներ 10 տարի

դ) Ներդրումներ

Ներդրումները ճանաչվում (ապաճանաչվում) են, երբ Ընկերությունը ձեռք է բերում (կորցնում է) վերահսկողությունը ակտիվի պայմանագրային իրավունքների հանդեպ:

Ներդրումները դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի եւ չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք չունեն գնանշված գին գործող շուկայում, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել եւ որոնք ֆիքսված ժամկետայնության դեպքում ներկայացվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆիքսված ժամկետայնության դեպքում՝ ինքնարժեքով:

Իրական արժեքով չափելու արդյունքում առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

ե) Հետաձգված հանքարդյունահանման ծախսումներ

Նախարտադրական հանքարդյունաբերական ծախսերը դասակարգված են ըստ հետաքրքրության տեղամասերի՝ հիմք ընդունելով հետեւյալ սկզբունքները՝

- նախարտադրական հետազոտության ծախսումները (հետախուզական աշխատանքներ, հանքանյութերի գծով իրավունքների ձեռք բերում, հետազոտություններ, գնահատում, զարգացում կամ շինարարություն) կուտակվում են ըստ հետաքրքրության տեղամասերի եւ գրանցվում են որպես հետաձգված ծախսեր հանքերի գծով:
- հետաքրքրության տվյալ տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման տնտեսական նպատակահարմարության հաստատման դեպքում, այս տեղամասին վերաբերող հանքերի գծով հետաձգված ծախսերը վերադասակարգվում են որպես հանքարդյունաբերական գույք:
- հետաքրքրության տվյալ տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման տնտեսական նպատակահարմարության չհաստատման դեպքում, այս տեղամասի հանքերի գծով հետաձգված ծախսերը ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, երբ չի հաստատվել օգտակար հանածոների արդյունահանման տնտեսական նպատակահարմարությունը:
- հետաքրքրության առանձին տեղամասին վերաբերող հանքերի գծով հետաձգված ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում եւ ճանաչվում են որպես ծախս, եթե նույնիսկ հետաքրքրության տեղամասում օգտակար հանածոների արդյունահանումը հաստատվել է որպես տնտեսապես նպատակահարմար, բայց չի նախատեսվում այլ նկատառումներից ելնելով:
- առանձին տեղամասին վերաբերող հանքերի գծով հետաձգված ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում եւ ճանաչվում են որպես ծախս, եթե երեք տարվա ընթացքում այս տեղամասում օգտակար հանածոների արդյունահանումը չի հաստատվել որպես տնտեսապես նպատակահարմար եւ չի մշակվել ծրագիր օգտակար հանածոների արդյունահանման համար:
- հաստատված, բայց չմշակված հետաքրքրության տեղամասի գծով հետաձգված ծախսերը պարբերաբար վերագնահատվում են՝ տնտեսական նպատակահարմարությունը որոշելու համար: Եթե պարզվում է, որ տեղամասում հանածոների արդյունահանումը տնտեսապես նպատակահարմար չէ, հետաձգված ծախսերն անմիջապես դուրս են գրվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:
- հանքերի գծով կուտակված ծախսերն ամորտիզացվում են՝ կիրառելով արտադրության միավորի մեթոդն, որն իրենից ներկայացնում է ընթացիկ ժամանակաշրջանում արտահանված հանքանյութի փաստացի քանակի հարաբերությունը վերջինիս ակնկալվող քանակին:

զ) Պաշարներ

Պաշարները, ներառյալ անավարտ աշխատանքները, ներկայացված են ինքնարժեքի եւ իրացման գուտ արժեքի նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձեւավորող գինն է՝ հանած համալրման եւ վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հիմնված է միջին կշռված գնման արժեքի վրա եւ ներառում է պաշարների ձեռք բերման ու պաշարները ներկա գտնվելու վայր եւ վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Սեփական ուժերով կառուցված պաշարների եւ անավարտ աշխատանքների սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսերի համապատասխան մասը՝ ելնելով արտադրական հզորությունից:

ե) Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր

Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքերը ներկայացված են ինքնարժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

ը) Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ են համարվում դրամարկդի դրամական միջոցները եւ բանկային հաշիվները:

թ) Արժեզրկում

Ընկերության ակտիվների, բացառությամբ պաշարների եւ հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյո՞ք առկա է արժեզրկման որեւէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որեւէ այդպիսի հայտանիշ առկա է, ակտիվների փոխհատուցվող գումարները գնահատվում են: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից բոլոր կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(i) Փոխհատուցվող գումարի հաշվարկ

Ընկերության դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է անկնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքով՝ զեղչված ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը չեն զեղչվում:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց վաճառքի գուտ գնից եւ օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը եւ ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ, դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը:

(ii) Արժեզրկումից կորուստի հակադարձում

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձություններին:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ

առանց համապատասխան մաշվածության եւ ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

ժ) Վարկեր եւ փոխառություններ

Վարկերն ու փոխառությունները ներկայացված են ինքնարժեքով, որն իրենից ներկայացնում է տրված փոխհատուցման իրական արժեքը՝ հանած համապատասխան գործարքների հետ կապված ծախսումները: Հետագա ճանաչումից հետո վարկերն ու փոխառությունները ներկայացվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

ի) Հատկացումներ կենսաթոշակային հիմնադրամի

Կենսաթոշակները տրամադրվում են պետության կողմից՝ ընկերությունների եւ աշխատակիցների կողմից կատարվող պարտադիր հատկացումների հաշվին: Ընկերությունը չունի առանձին կենսաթոշակային համակարգ իր աշխատակիցների համար:

լ) Պահուստներ

Հաշվապահական հաշվեկշռում պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք եւ հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե հետեւանքը էական է, պահուստները սահմանվում են՝ գեղջելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերը հարկումից առաջ գործող այն դրույքով (առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը), որը արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատականները:

խ) Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր

Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքերը ներկայացված են ինքնարժեքով:

ծ) Հարկեր

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ եւ հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված միավորների, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, եւ նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը, սահմանելով ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակներով օգտագործվող ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների եւ հարկման նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունը: Հետաձգված հարկերի գումարը հիմնված է ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ եւ որոնք կկիրառվեն այն ժամանակաշրջանում, երբ ակնկալվում է ժամանակավոր տարբերությունների հակադարձումը:

Հետաձգված հարկային ակտիվը պետք է ճանաչվի միայն այն չափով, որքանով հավանական է, որ կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ակտիվները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական է, որ հարկային օգուտը կիրացվի:

կ) Հասույթ

Ապրանքների իրացումից հասույթը ճանաչվում է, երբ սեփականության հետ կապված զգալի ռիսկերն ու օգուտները փոխանցվում են գնորդին:

հ) Ինքնարժեք

Ինքնարժեքը ներառում է ձեռք բերման, փոխարկման հետ կապված ծախսերը եւ պաշարները ներկա գտնվելու վայր եւ վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

ձ) Չուտ ֆինանսական ծախսեր

Չուտ ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները, ներդրված միջոցների գծով ստացվելիք տոկոսները, փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը եւ վնասը, վերագնահատման արդյունքում առաջացած շահույթը եւ վնասը, ինչպես նաեւ վաճառքի համար մատչելի ներդրումների օտարումը:

դ) Համեմատական տեղեկատվություն

Համեմատական տեղեկատվությունում տեղի են ունեցել որոշ վերադասակարգումներ՝ ընթացիկ ֆինանսական տարվա տվյալների ներկայացման հետ համադրելիությունն ապահովելու նպատակով (ծանոթագրություն 27):

4. Հասույթ

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Հասույթ ապրանքների իրացումից/վաճառքից	7,459,248	6,026,200
Հասույթ ծառայությունների մատուցումից	161,648	13,318
	7,620,896	6,039,518

5. Այլ գործառնական եկամուտ

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Չուտ եկամուտ պաշարների վաճառքից	417,360	275,524
(վնաս)/շահույթ հիմնական միջոցների օտարումից	(10,372)	35
Ստացված հայցեր	130,528	-
Եկամուտ բացահայտված պաշարներից եւ այլ ակտիվներից	105,294	213,359
ԱՎԴ-ի գծով ճշգրտում	-	48,193
Ստացված տույժեր եւ տուգանքներ	-	18,692
Այլ	2,252	28,918
	645,062	584,721

6. Բաշխման ծախսեր

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Փոխադրման ծախսեր	332,887	302,980
Մաքսային տուրքեր ապրանքների գծով	7,033	5,906
Այլ բաշխման ծախսեր	17,860	5,018
	<u>357,780</u>	<u>313,904</u>

7. Վարչական ծախսեր

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Աշխատավարձի գծով ծախսեր	322,823	328,265
Ներկայացուցչական ծախսեր եւ ճանապարհածախս	62,721	16,889
Մաշվածություն	52,161	56,222
Կոմունալ եւ հաղորդակցման ծախսեր	31,436	8,272
Տույժեր եւ տուգանքներ	24,435	188,533
Պահպանման ծախսեր	14,426	10,253
Աուդիտի եւ խորհրդատվական ծառայությունների վարձավճարներ	13,205	12,866
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	2,923	8,180
Այլ	208,743	143,261
	<u>732,873</u>	<u>772,741</u>

Աշխատավարձի գծով ծախսերը ներառում են 38,745 հազար դրամ գումարով պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները (2002թ-ին՝ 37,073 հազար դրամ):

2003թ-ին Ընկերության աշխատակիցների միջին թիվը կազմում էր 766 (2002թ-ին՝ 815): 2003թ-ին աշխատակազմի գծով ընդհանուր ծախսերը կազմում էին 667,877 հազար դրամ (2002թ-ին՝ 643,710 հազար դրամ):

8. Այլ գործառնական ծախսեր

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Հանքարդյունաբերական ծախսեր	53,542	76,476
Դուրս գրված պաշարներ	7,882	32,993
Տույժեր եւ տուգանքներ	-	213,001
Հիմնական միջոցների լիկվիդացման ծախսեր	-	90,254
Այլ	26,000	51,489
	<u>87,424</u>	<u>464,213</u>

9. Չուտ ֆինանսական ծախսեր

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Տոկոսային ծախս	237,359	147,196
(Շահույթ)/վնաս արտարժույթով իրականացված գործարքներից	(49,324)	96,999
Շահույթ ֆինանսական ակտիվների վաճառքից	(6,167)	-
Տոկոսային եկամուտ	(577)	-
	<u>181,291</u>	<u>244,195</u>

10. Հարկերի գծով ծախս

Ընկերությունն ունի հարկի գումարի 50% նվազեցման արտոնություն մինչև 2008թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերջը: 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահութահարկի ստանդարտ դրույքաչափը կազմում էր 20% (2002թ-ին՝ 20%) տոկոսադրույք:

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
		Վերաներկայացված
<i>Ընթացիկ հարկային ծախս</i>		
Ընթացիկ տարի	(45,951)	-
Մարված հարկային վնասներ	(22,005)	-
<i>Հետաձգված հարկային կրեդիտ/(ծախս)</i>		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում եւ հակադարձում	103,180	(49,152)
Նախորդ ժամանակաշրջանների օգտագործված հարկային վնաս	(87,296)	-
	<u>(52,072)</u>	<u>(49,152)</u>

Հետաձգված հարկային ակտիվները եւ պարտավորությունները կիրառելի են հետեւյալ հոդվածների հանդեպ՝

	Ակտիվներ հազ. դրամ		Պարտավորություն- ներ հազ. դրամ		Չուտ հազ. դրամ	
	2003թ.	2002թ.	2003թ.	2002թ.	2003թ.	2002թ.
		Վերաներկ.		Վերաներկ.		Վերաներկ.
Հիմնական միջոցներ	-	-	637,738	647,391	637,738	647,391
Ներդրումներ	(3,918)	(3,918)	-	-	(3,918)	(3,918)
Առեւտրային եւ այլ դեբի- տորական պարտքեր	-	-	32,036	10,250	32,036	10,250
Առեւտրային եւ այլ կրեդի- տորական պարտքեր	(115,313)	-	-	-	(115,313)	-
Նախորդ ժամանակաշրջա- նի հարկային վնաս	-	(109,301)	-	-	-	(109,301)
	<u>(119,231)</u>	<u>(113,219)</u>	<u>669,774</u>	<u>657,641</u>	<u>550,543</u>	<u>544,422</u>

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2003թ. հազ. դրամ	%	2002թ. հազ. դրամ	%
			Վերաներկայացված	
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	357,067		(274,644)	
Ակնկալվող հարկային ծախս հաշ- վարկված կիրառելի հարկային դրույքներով	35,707	10.0	(27,464)	(10.0)
Չնվազեցվող/չհարկվող միավորներ	(5,640)	(1.6)	16,906	6.2
Մարված հարկային վնասներ	22,005	6.2	59,710	21.7
	<u>52,072</u>	<u>14.6</u>	<u>49,152</u>	<u>17.9</u>

11. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Վարձակալված մի- ջոցների բարելավում	Հիմնական միջոցներ	Փոխադրամիջ.	Տնտեսական գույք	Զօգտագործվող հիմնական միջոցներ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Արժեք/Վերագնահատված արժեք							
Առ 1 հունվարի 2003թ.	2,499,117	70,216	1,278,495	29,739	120,002	815,161	4,812,730
Ավելացումներ	3,401	-	4,488	1,740	2,492	57,195	69,316
Օտարումներ	(203)	-	(18,244)	(4,347)	(1,159)	(8,611)	(32,564)
Փոխանցումներ	-	-	(31,852)	5,758	7,269	18,825	-
Առ 31 դեկտեմբերի 2003թ.	2,502,315	70,216	1,232,887	32,890	128,604	882,570	4,849,482
Մաշվածություն							
Առ 1 հունվարի 2003թ.	49,984	9,142	49,707	2,459	16,132	924	128,348
Տարվա ծախսը	50,235	3,511	54,262	3,219	27,763	-	138,990
Օտարումներ	-	-	(2,357)	(375)	(1,013)	-	(3,745)
Փոխանցումներ	(242)	-	(16,477)	222	(1,003)	17,500	-
Առ 31 դեկտեմբերի 2003թ.	99,977	12,653	85,135	5,525	41,879	18,424	263,593
Զուտ հաշվեկշռային արժեք							
Առ 1 հունվարի 2003թ.	2,449,133	61,074	1,228,788	27,280	103,870	814,237	4,684,382
Առ 31 դեկտեմբերի 2003թ.	2,402,338	57,563	1,147,752	27,365	86,725	864,146	4,585,889

Հիմնական միջոցների վերագնահատումն իրականացվել է 2001թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լիցենզավորված գնահատող «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի կողմից: Շարժական հիմնական միջոցները վերագնահատվել էին իրական արժեքով, ոչ շարժական հիմնական միջոցները գնահատվել էին փոխարինման արժեքով՝ հանած մաշվածությունը: Եթե հիմնական միջոցները չվերագնահատվեին, վերջիններիս զուտ հաշվեկշռային արժեքը 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր 1,622,791 հազար դրամ (2002թ-ին՝ 1,507,574 հազար դրամ): Բոլոր ոչ շարժական հիմնական միջոցները գրավադրված են բանկից ստացված վարկերի դիմաց: Բոլոր շարժական հիմնական միջոցները, որոնց արժեքը գերազանցում է 10,000 եվրոյին համարժեք դրամը, գրավադրված են բանկից ստացված վարկերի դիմաց (ծանոթագրություն 20):

12. Ոչ նյութական ակտիվներ

	2003թ. հազ. դրամ
<i>Արժեք</i>	
Առ 1 հունվարի	46,619
Ավելացումներ	6,281
Օտարումներ	(37,507)
Առ 31 դեկտեմբերի	15,393
 <i>Ամորտիզացիա</i>	
Առ 1 հունվարի	46,619
Տարվա ծախս	2,923
Օտարումներ	(37,507)
Առ 31 դեկտեմբերի	12,035
 <i>Չուտ հաշվեկշռային արժեք</i>	
Առ 31 դեկտեմբերի	3,358
 Առ 1 հունվարի	-

Ոչ նյութական ակտիվներ են համարվում համակարգչային ծրագրերը եւ արտադրական տեխնոլոգիաները:

13. Հետաձգված հանքաարդյունաբերական ծախսումներ

	2003թ. հազ. դրամ
<i>Արժեք</i>	
Առ 1 հունվարի	349,425
Ավելացումներ	76,373
Առ 31 դեկտեմբերի	425,798
 <i>Կուտակված ամորտիզացիա</i>	
Առ 1 հունվարի	71,471
Ամորտիզացիայի գծով ծախս	33,634
Առ 31 դեկտեմբերի	105,105
 <i>Չուտ հաշվեկշռային արժեք</i>	
Առ 1 հունվարի	277,954
 Առ 31 դեկտեմբերի	320,693

Հետաձգված հանքաարդյունաբերական ծախսումները վերաբերում են Ալավերդու հանքին:

14. Երկարաժամկետ ներդրումներ

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Վաճառքի համար մատչելի		
<i>Սեփական կապիտալի գործիքներ - չգնանշված</i>		
«Մանեսի ԳՄԳ» ԲԲԸ	38,489	38,351
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	26,322	51,423
«Վալլեքս Այ Թի» ՓԲԸ	5	5
«Վալլեքս Մայնիկ» ՓԲԸ	-	1,050
Արժեզրկման գծով պահուստ	(39,182)	(39,182)
	25,634	51,647

Սեփական կապիտալի չգնանշված ներդրումներ

Անվանումը	Գրանցման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող %		2003թ. հաշվեկշռ. արժեք հազ. դրամ	2002թ. հաշվեկշռ. արժեք հազ. դրամ
			2003թ.	2002թ.		
«Մանեսի ԳՄԳ» ԲԲԸ	Հայաստան	Ձուլում	16.3	16.1	-	-
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	Հայաստան	Լեռնամետալուրգիական տեխնոլոգիաների մշակում	15	30	25,629	51,423
«Վալլեքս Այ Թի» ՓԲԸ	Հայաստան	Համակարգիչների վաճառք	1	1	5	5

Տարվա ընթացքում Ընկերությունը վաճառեց ինքնարժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի ներդրումները, որոնց հաշվեկշռային արժեքը կազմում էր 76,741 հազար դրամ (2002թ-ին՝ գրո): Վաճառքի արդյունքում Ընկերությունը ստացավ 6,167 հազար դրամ գումարի օգուտ (2002թ-ին՝ գրո):

Նախկինում Ընկերության փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ում ներդրումը 2002թ-ին չէր հաշվառվում ըստ բաժնեմասնակցության մեթոդի, քանի որ ներդրման ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէր լինի:

15. Պաշարներ

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Հումք	1,281,834	597,988
Պատրաստի արտադրանք	193,124	7,434
Անավարտ արտադրանք	27,887	27,870
Այլ պաշարներ	14,102	19,219
	1,516,947	652,511

Հումքը, անավարտ արտադրանքը եւ պատրաստի արտադրանքը ներակայացված են ինքնարժեքի եւ իրացման գուտ արժեքի նվազագույնով:

Ամբողջ հումքը (պղնձի խտանյութը եւ պղնձի ջարդոնը) եւ պատրաստի արտադրանքը (սեւ պղինձը) գրավադրված են բանկի կողմից տրամադրված վարկերի դիմաց (ծանոթագրություն 20):

16. Առետրային եւ այլ դեբիտորական պարտքեր

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Հաշվանցման ենթակա ԱԱՀ	878,973	385,849
Դեբիտորական պարտքեր	665,542	93,785
Կանխավճարներ	432,792	81,501
Այլ	8,640	20,918
	1,985,947	582,053
Վերականգնման ենթակա ԱԱՀ-ի եւ դեբիտորական պարտքերի գծով արժեզրկում	(208,569)	(1,630)
	1,777,378	580,423

Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի շարժ

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Տարեսկզբի դրությամբ	1,630	-
Պահուստների գուտ աճ	222,024	1,630
Տարվա ընթացքում դուրս գրված	(15,085)	-
Տարեվերջի դրությամբ	<u>208,569</u>	<u>1,630</u>

Հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գծով Ընկերությունը ճանաչել է արժեզրկման գծով պահուստ 208,569 հազար դրամ գումարի չափով, որի վերադարձման հիմնավորվածությունը ճշտվում է հարկային մարմինների կողմից:

17 Տրամադրված վարկեր եւ դեբիտորական պարտքեր

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Տրամադրված վարկեր (ծանոթագրություն 24)	<u>23,000</u>	<u>-</u>

18. Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	3,045	354
Ընթացիկ հաշիվ	77,987	6,403
	<u>81,032</u>	<u>6,757</u>

Եկամտային եւ ծախսային հաշիվներում առկա եւ ապագայում տեղաբաշխման ենթակա բոլոր դրամային ակտիվները գրավադրված են բանկի կողմից տրամադրված վարկերի դիմաց (ծանոթագրություն 20):

19. Թողարկված կապիտալ

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հայտարարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 40,000,000 (2002թ.-ին՝ 40,000,000) սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ արժեքով: 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված եւ ամբողջովին վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 3,069,716 (2002թ.-ին՝ 2,960,651) սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ արժեքով:

2002թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված 2,960,651 սովորական բաժնետոմսերը բաժնետերերի կողմից գրավադրվել էին բանկի կողմից տրամադրված վարկերի դիմաց (ծանոթագրություն 20):

20. Կարճաժամկետ փոխառություններ

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Վարկեր բանկից	1,462,827	604,546
Չամորտիզացված տոկոսներ	(38,687)	4,940
	<u>1,424,140</u>	<u>609,486</u>

Բանկից ստացված վարկերի հանդեպ կիրառվում է տարեկան 14% արդյունավետ տոկոսադրույք (2002թ-ին՝ տարեկան 22% տոկոսադրույք):

Բանկից ստացված վարկերի դիմաց Ընկերությունը գրավադրել է՝

- ամբողջ անշարժ գույքը.
- բոլոր շարժական հիմնական միջոցները, որոնց արժեքը գերազանցում է 10,000 եվրոյին համարժեք դրամ գումարը.
- շրջանառության մեջ գտնվող ապրանքները, ներառյալ պղնձի խտանյութը, պղնձի ջարդոնը եւ պատրաստի արտադրանքը (սեւ պղինձը).
- եկամտային հաշիվը՝ եկամտային (Եսքրո) հաշվում առկա եւ ապագայում տեղաբաշխման ենթակա բոլոր դրամային ակտիվները.
- ծախսային հաշիվը՝ ծախսային (Եսքրո) հաշվում առկա եւ ապագայում տեղաբաշխման ենթակա բոլոր դրամային ակտիվները.
- բաժնետոմսերը՝ 2002թ. դեկտեմբերի 6-ի դրությամբ թողարկված եւ տեղաբաշխված 2,960,651 բաժնետոմսերը (100%), այդ թվում առաջնակարգ ապահովման գրավ՝ 2,220,488 բաժնետոմս կամ 75%, եւ հաջորդող գրավ՝ 740,163 բաժնետոմս կամ 25%.
- ապահովագրման պայմանագրերով նախատեսված բոլոր իրավունքները, շահերն ու օգուտները (ներառյալ ապահովագրության փոխհատուցման իրավունքը), եւ
- վաճառքի պայմանագրերով նախատեսված բոլոր իրավունքները, շահերն ու օգուտները:

21. Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր

	2003թ. հազ. դրամ	2002թ. հազ. դրամ
Կրեդիտորական պարտքեր	1,274,909	1,148,881
Ստացված կանխավճարներ	844,524	22,654
Վճարվելիք հարկեր	66,827	241,910
Այլ վճարվելիք գումարներ	102,228	70,374
	<u>2,288,488</u>	<u>1,483,819</u>

22. Ֆինանսական գործիքներ

Պարտքային ռիսկ

Ընկերությունը չի պահաջում գրավ ֆինանսական ակտիվների դիմաց: Վարկերի վերազնահատումներն իրականացվում են բոլոր հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի, որոնց պահանջում է որոշակի գումարով վարկեր:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ներկայացված է հաշվապահական հաշվեկշռում յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի արտացոլված հաշվեկշռային արժեքով:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխությունները ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի եւ փոխառությունների վրա՝ փոխելով վերջիններիս կամ իրական արժեքը (ֆիքսված դրույքով վարկ) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով վարկ): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների հանդեպ Ընկերության ենթարկվածության չափը որոշող պաշտոնական քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկ վերցնելիս/տրամադրելիս, մինչեւ մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս, ղեկավարությունը հիմնվում է իր կարծիքի վրա:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը կապված է վաճառքի, ձեռք բերումների եւ փոխառությունների հետ, որոնք արտահայտված են ՀՀ դրամից տարբեր այլ արժույթներով, բացառությամբ ՀՀ դրամը: Նման ռիսկ առաջացնող արժույթը հիմնականում ԱՄՆ դոլարն է: Ղեկավարությունը չի հեջավորում Ընկերության ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին: Հաշվետու ամսաթվի դրությամբ պաշտոնական փոխարժեքը կազմում էր 566.00 դրամ 1 ԱՄՆ դոլարի հանդեպ (2002թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 584.89 դրամ 1 ԱՄՆ դոլարի հանդեպ):

Իրական արժեք

Հայկական շուկայի իրացվելիության եւ հրապարակված «ցուցանիշ տոկոսադրույքների» բացակայության պայմաններում եւ հաշվի առնելով այն փաստը, որ գործարքների մեծ մասը յուրահատուկ բնույթ են կրում, հնարավոր չէ որոշել կապակցված անձանց վճարվելիք եւ վերջիններից ստացվելիք գումարների իրական արժեքը:

Վաճառքի համար մատչելի ներդրումները ներկայացված են ինքնարժեքով, ինչպես քննարկվել է ծանոթագրություն 14-ում:

Այլ դեպքերում իրական արժեքը որոշվում է կամ հիմք ընդունելով շուկայական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ կամ գեղջելով դրամական միջոցների հոսքերը՝ կիրառելով նմանատիպ գործիքների համար սահմանված շուկայական տոկոսադրույքները: Արդյունքում, ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերության ֆինանսական ակտիվների եւ պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես հավասար է վերջիններիս հաշվեկշռային արժեքներին:

23. Պոտենցիալ պարտավորություններ եւ պայմանական դեպքեր

Շրջակա միջավայրի պահպանություն

Ընկերության ղեկավարության կարծիքով, Ընկերությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող Կառավարության բոլոր պահանջներին, այդ իսկ պատճառով վստահ է, որ Ընկերությունը չունի ոչ մի ընթացիկ, նյութական պարտավորություններ շրջակա միջավայրի պահպանության հետ կապված: Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը մշակման փուլում է Հայաստանում, եւ օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ հետագա էական պարտավորությունների համար:

Հարկային օրենսդրության հակասություններ եւ երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է եւ բնորոշվում է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ հստակ չէ, հակասական է եւ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ հարկային տարբեր իրավասու մարմինները տալիս են տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ուսում-

նասիրության իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով իրավունք է վերապահված կիրառել նշանակալից տույժեր, տուգանքներ եւ տոկոսներ:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը հավատացած է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանումներ, եւ հետեւանքները կարող են լինել էական:

24. Գործարքներ կապակցված կողմերի հետ

- 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմերից ստացվելիք գումարները կազմում էին 575,099 հազար դրամ (2002թ-ին՝ 25,136 հազար դրամ):
- 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմերին վճարվելիք գումարները կազմում էին 614,796 հազար դրամ (2002թ-ին՝ 18,661 դրամ):

2003թ-ի ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետեւյալ գործարքները՝

- 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ կապակցված կողմին 23,000 հազար դրամ գումարով տրամադրված վարկ (2002թ-ին՝ գրո): Վարկի հանդեպ կիրառվում է տարեկան 15% տոկոսադրույք, իսկ մարման ժամկետը չի գերազանցում տասներկու ամիս ժամկետը.
- 2003թ-ի ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերին է վաճառել 82,908 հազար դրամ գումարով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ (2002թ-ին՝ գրո).
- 2003թ-ի ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերին է վաճառել 646,698 հազար դրամ գումարով ապրանքներ եւ մատուցված ծառայություններ (2002թ-ին՝ 557,257 հազար դրամ).
- 2003թ-ի ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերից գնել է 1,236,891 հազար դրամ գումարով ապրանքներ եւ ծառայություններ (2002թ-ին՝ 123,301 հազար դրամ):

25. Անընդհատություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, որը ենթադրում է ակտիվների իրացում եւ պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2003 թվականն առաջին տարին էր, երբ Ընկերությունը շահույթ ստացավ, որը կազմեց 304,996 հազար դրամ (2002թ-ին՝ 323,796 հազար դրամ վնաս): 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կուտակված վնասը կազմում էր 1,762,201 հազար դրամ (2002թ-ին՝ 2,126,669 հազար դրամ): Ի լրումն, Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցում էին ընթացիկ ակտիվները 314,272 հազար դրամով (2002թ-ին՝ 853,614 հազար դրամ):

26. Հետհաշվեկշռային իրադարձություններ

2003թ. դեկտեմբերի 31-ից հետո Ընկերությունը տեղադրել է ձուլման նոր վառարան, ինչը թույլ կտա արտադրանքի ծավալն ավելացնել 50 տոկոսով:

27. Նախորդ ժամանակաշրջանի ճշգրտում

(i) Վերադասակարգում

Ստորև ներկայացված տվյալները վերադասակարգվել են՝ ընթացիկ ֆինանսական տարվա տվյալների ներկայացման հետ համադրելիությունն ապահովելու նպատակով՝

- 34,414 հազար դրամ գումարով մաշվածության գծով ծախսը, որը վարչական ծախսերից վերադասակարգվել է ինքնարժեքի.
- 62,925 հազար դրամ գումարով Ալավերդու հանքի գծով ծախսերը, որոնք ոչ կյու-թական ակտիվներից վերադասակարգվել են հանքարդյունաբերական հետա-ծգված ծախսերի.
- 40,751 հազար դրամ գումարով վարկերի գծով կապիտալացված ծախսերը, որոնք հանքարդյունաբերական հետածգված ծախսերից վերադասակարգվել են հե-տածգված ծախսերի.
- 20,510 հազար դրամ գումարը, որը պատրաստի արտադրանքից վերադասա-կարգվել է հումքի.
- 820,911 հազար դրամ վերագնահատված հիմնական միջոցները եւ 19,738 հազար դրամ գումարով կուտակված մաշվածությունը, որը վերադասակարգվել է հիմնա-կան միջոցների համապատասխան դասերի եւ կուտակված մաշվածության միջեւ:

(ii) Վերաներկայացում

2003թ-ին ղեկավարությունը բացահայտեց, որ 2001 եւ 2002 թվականներին վերաբերող հետածգված հարկային պարտավորության գումարը հաշվարկվել է ոչ ճիշտ, հանգեց-նելով՝

- 2001թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ վնասի 34,488 հազար դրա-մով պակաս ներկայացմանը.
- 2001թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետածգված հարկային պարտավորության 300,138 հազար դրամով պակաս ներկայացմանը.
- 2001թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագնահատման պահուստի 265,650 հա-զար դրամով ավել ներկայացմանը.
- 2002թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ վնասի 60,201 հազար դրա-մով պակաս ներկայացմանը.
- 2002թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետածգված հարկային ակտիվի 360,339 հա-զար դրամով պակաս ներկայացմանը:

Այս սխալներն ուղղվել են, եւ համեմատական տեղեկատվությունը վերաներկայացվել է: Վերաներկայացման արդյունքը հետեւյալն է՝

- 2001թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ վնասը ավելացավ 34,488 հազար դրամ, որը ներկայացված է որպես 2002թ-ի կուտակված վնասի տարե-սկզբի մնացորդի ճշգրտում.
- 2001թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագնահատման պահուստը նվազեց 265,650 հազար դրամով, որը ներկայացված է որպես վերագնահատման պահու-ստի տարեսկզբի մնացորդի ճշգրտում.
- 2001թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետածգված հարկային պարտավորության գծով կատարվել է 300,138 հազար դրամ գումարով ճշգրտում.
- 2002թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ վնասը նվազեց 60,201 հա-զար դրամով, որը ներկայացված է որպես 2003թ. կուտակված վնասի տարեսկզբի մնացորդ.
- 2002թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետածգված հարկային պարտավորության գծով կատարվել է 360,339 հազար դրամ գումարով ճշգրտում:

Վերաներկայացման ազդեցությունը համեմատական տեղեկատվության վրա հե-տեւյալն է՝

Կուտակված վնաս	հազ. դրամ
Կուտակված վնաս 2003թ. սկզբի դրությամբ ըստ Նախորդ ժամանակաշրջանների հաշվետվությունների	2,031,980
Նախորդ ժամանակաշրջանների տվյալների վերահաշվարկ	94,698
Վերաներկայացված մնացորդը տարեսկզբի դրությամբ	2,126,669
 Չետաձգված հարկային պարտավորություն	 հազ. դրամ
Չետաձգված հարկային պարտավորությունը 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ըստ Նախորդ ժամանակաշրջանների հաշվետվությունների	184,083
Նախորդ ժամանակաշրջանների տվյալների վերաներկայացում	360,339
Վերաներկայացված մնացորդը տարեսկզբի դրությամբ	544,422

28. Նշանակալից ռիսկերի կենտրոնացում

Ընկերությունն իր արտադրանքի մեծ մասը վաճառում է մեկ գևորդի, իսկ պղնձի խտանյութի մեծ մասը գնում է Հայաստանի ամենախոշոր մատակարարներից մեկը հանդիսացող մատակարարից: Ի լրումն, զգալի միջոցներ, ստացվելիք ավելացված արժեքի հարկի տեսքով, պետք է վճարվեն Հայաստանի հարկային մարմինների կողմից, որոնք հաճախ ուշացնում են վճարումները (ծանոթագրություն 16):